ՀԻՐԻԿ ԱՆՏՈՆՅԱՆ

Երկարատև և ծանր հիվանդությունից հետո կյանքից հեռացավ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի «Պատմա-բանասիրական հանդեսի» խմբագրության գիտական աշխատակցուհի Հիրիկ Անտոնի Անտոնյանը: Երբ ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը ծրագրում էր լույս ընծայել «Պատմա-բանասիրական հանդես», նա ապագա աշխատակիցների խստապահանջ ընտրություն կատարեց: Առանց երկմտանքի նա դրանց մեջ ներառեց համալսարանի իր նախկին լավագույն ուսանողուհիներից մեկին՝ Հիրիկ Անտոնյանին, որն աչքի էր ընկնում ոչ միայն լեզվական փայլուն ընդունակություններով, այլև պատմական իրադարձությունները ճշտորեն գնահատելու կարողությամբ և պատմա-բանասիրական հարցերի քննության նպաստող իր բազմակողմանի գիտելիքներով: Հիմնադրման առաջին օրից սկսած, 40 տարի, նա աշխատեց Հայաստանի ակադեմիայի այս հանդեսում՝ կատարելով գիտական խմբագրի ոչ դյուրին պարտականություններ: Քանի՞-քանի՞ հայագիտական լուրջ աշխատություններ են անցել նրա ձեռքի տակով: Նրա աշխատանքը գնահատվում էր: Շատերը, այդ թվում և գիտությունների դոկտորներ և ակադեմիկոսներ երախտապարտ էին նրան իրենց գիտական աշխատությունների հրապարակմանը նպաստող լրջախոհ դիտողությունների և խմբագրական բարեխիղճ աշխատանքի համար: Միաժամանակ նա զբաղվում էր թարգմանչական աշխատանքով: Նա պատկանում էր այն հաղվագյուտ մասնագետների թվին, ովքեր լիովին հայկական կրթություն ունենալով հանդերձ, այնքան լավ էին տիրապետում ռուսերենին, որ թարգմանություններ էին կատարում ոչ միայն ռուսերենից հայերեն, այլև հայերենից ռուսերեն:

Մաշտոցի անվան Մատենադարանի ղեկավարությունը նրան վստահեց պրոֆ. Հակոբ Փափազյանի «Մատենագարանի պարսկերեն կալվածագրերը» մեծարժեք հատորի թարգմանությունը հայերենից ռուսերեն: Նա զբաղվում էր նաև գրաբարից ռուսերեն թարգմանության գործով: Թուրքմենստանի կառավարության պատվերով բանասիրական գիտ. դոկտոր Քնարիկ Տեր-Դավթյանի հետ Հ. Անտոնյանը գրաբարից ռուսերեն թարգմանեց «Հայկական սկզբնաղբյուրները թուրքմենական Կարա-կոյունլու և Ադ-կոյունլու պետությունների մասին» ժողովածուն, որը լույս ընծայվեց Աշգաբադում՝ արժանանալով մասնագետների բարձր գնահատականին:

Հ. Անտոնյանը ծնվել է Երևանում 1929 թ.: Նրա հայրը՝ բնիկ երևանցի Անաոն Անտոնյանը, Պետերբուրգում բարձրագույն կրթություն ստացած մի հայրենասեր մարդ, վերադառնալով հայրենի քաղաք՝ ստեղծեց թանգարան և մանկավարժական ուսումնարան: Մայրը՝ Բյուրեղ Աստվածատրյանը, Երևանի Հռիփսիմյան գիմնազիայի և պետական համալսարանի առաջին շրջանավարտներից էր: Տոհմիկ քանաքեռցիների ընտանիքից էր: Նրա հայրը, պապը, հորեղբայրը, մորաքույրները ուսուցիչներ էին, հավատարիմ շարունակողներն այն գործի, որը կապվում էր մեծ լուսավորիչ, քանաքեռցի Խաչատուր Աբովյանի անվան հետ:

Հ. Անտոնյանին ևս սպասում էր մանկավարժական աշխատանք: 1947 թ. նա ոսկե մեդալով ավարտել էր Ն. Կրուպսկայայի անվան դպրոցը և գերազանցության դիպլոմով՝ Երևանի համալսարանի պատմության ֆակուլտետը, ուստի և նրան որպես ուսուցչուհի հրավիրել էին իր հարազատ դպրոցը: Բայց քանի որ 1938 թ. սկզբներին բերիական դահիճների ձեռքով ձերբակալվել ու գնդակահարվել էր նրա հայրը՝ քաղաքականությունից հեռու, մասնագիտությամբ բնագետ Անտոն Անտոնյանը, նրանք համարվում էին «ժողովրդի թշնամու» հարազատներ, ուստի մի հին բոլշևիկի սադրանքներով Հ. Անտոնյանը ղրկվեց մանկավարժական աշխատանքից Երևանի կենտրոնում գտնվող այդ դպրոցում:

Բայց Հ. Անտոնյանը գտավ իր ասպարեզը և շատ օգտակար դեր խաղաց հայագիտական հետազոտությունների մշակման ու հրապարակման գործում: Նա ծայր աստիճանի համեստ, զգայուն մարդ էր, ընկերների ու հարազատների նկատմամբ ուշադիր և հոգատար: Անողոք մահը կտրեց նրա կյանքի թելը, և այսօր մեր բարոյական պարտքն է խորին շնորհակալություն հայտնել նրան՝ կատարած լավ գործերի, իր բարի, սիրալիր և առինքնող նկարագրի համար:

«ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ»
ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ